

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 23.6/[185230]-14

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-ԻՆ
ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ԵՎ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ՝

Ա. Գևորգյան	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Գ. Բեգլարյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Վ. Ավանեսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Հ. Թովմասյան	ՀՀ արդարադատության նախարար
Դ. Սարգսյան	ՀՀ ֆինանսների նախարար
Ե. Զախարյան	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ
Կ. Արեյան	Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ
Վ. Նիկոյան	Երևանի քաղաքապետի տեղակալ
Ն. Երիցյան	ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ
Ա. Սարգսյան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն

Հրավիրվածներ՝

Հ. Մարգարյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Վ. Գաբրիելյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար
Ա. Առաքելյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ

Վ. Միրումյան	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ
Վ. Կոիկյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Ս. Տոնոյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ
Ռ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Է. Ավետյան	ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական կառավարման կենտրոն» պետական հիմնարկի տնօրեն
Ք. Ղալեյան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի իրավաբան

1. Կառավարման խորհրդի նախորդ հանձնարարականների կատարման մասին

(Ա. Սարգսյան, Ն. Երիցյան, Տ. Սարգսյան)

3. Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի և քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրերի կառավարման խորհրդի նախորդ նիստերի ընթացքում տրված հանձնարարականների կատարման ընթացքի մասին տեղեկատվությունը.

2) հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ա. Սարգսյանին՝ համաձայնեցնելով ԱԶԲ-ի հետ, չնախատեսված ծախսերի շրջանակներում, Երևան-Արտաշատ հատվածում վերգետնյա անցում կառուցելու և Տրանշ 1-ի շրջանակներում առկա ուղեանցերը վերանորոգելու նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմելու և տեխնիկական մասնագետները մշակելու նպատակով խորհրդատվական ծառայությունների ձեռքբերումը ներառել հայտարարված՝ Տրանշ 3-ի շինարարական վերահսկողության և Տրանշ 4-ի տեխնիկատնտեսական ուսումնասիրության, նախնական նախագծման և շուրջ 60 կմ-ի մանրամասն նախագծման համար խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման տեխնիկական առաջադրանքում:

2. Խորհրդատու «Էջիս Ինթերնեյշնլ» ընկերության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

(Ա. Սարգսյան, Տ. Սարգսյան)

2. Քննարկումներից հետո որոշվեց՝ հավանություն տալ «Էջիս Ինթերնեյշնլ» ընկերության հետ 2010 թվականի սեպտեմբերի 24-ին կնքված N 02-CS-002 պայմանագրում փոփոխություններ կատարելու առաջարկությանը:

3. «ՍՕՍ-Աուդիտ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրի հաստատման մասին

(Ա. Սարգսյան, Տ. Սարգսյան)

2. Քննարկումներից հետո որոշվեց՝ հավանություն տալ «ՍՕՍ-Աուդիտ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրին:

4. Հայաստանի և Վրաստանի Հանրապետությունների միջև գտնվող Բագրատաշենի սահմանային հսկողության անցակետի տարածքում նոր կամրջի կառուցման վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎՋԵԲ) բաղադրիչի իրականացման ընթացքի մասին

(Ա. Սարգսյան, Տ. Սարգսյան)

3. Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության միջև գտնվող Բագրատաշենի սահմանային հսկողության անցակետի տարածքում նոր կամրջի կառուցման վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎՋԵԲ) բաղադրիչի իրականացման ընթացքի մասին ներկայացված տեղեկատվությունը.

2) հանձնարարել ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Գ. Բեգլարյանին՝

ա. ներկայացնել առաջարկություն Վրաստանի Հանրապետության ճանապարհաշինության ոլորտի կառավարման փորձը ՀՀ-ում կիրառելու վերաբերյալ,

բ. Հյուսիսային միջանցքի արդիականացման ծրագրի շրջանակներում սահմանված կարգով ներկայացնել առաջարկություն Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի և քաղաքա-

յին կայուն զարգացման ներդրումային ծրագրերի կառավարման խորհրդի կանոնադրությունում համապատասխան փոփոխություններ կատարելու վերաբերյալ,

գ. խորհրդի անհատական կազմում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ Հ. Բեգլարյանի փոխարեն ընդգրկել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ Ա. Առաքելյանին,

դ. խորհրդի անհատական կազմում ընդգրկել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Վ. Միրումյանին.

3) գնահատող հանձնաժողովի կազմում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ (հանձնաժողովի նախագահ) Հ. Բեգլարյանի փոխարեն ընդգրկել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ Ա. Առաքելյանին:

Լ Ր Ա Ց ՈՒ Ց Ի Չ Հ Ա Ր Ց

5. «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի նոր հաստիքացուցակը և համապատասխան դրույքաչափերը հաստատելու մասին

(Ա. Սարգսյան, Դ. Սարգսյան, Գ. Բեգլարյան, Վ. Կոնյան, Ն. Երիցյան,
Հ. Մարգարյան, Տ. Սարգսյան)

7. Քննարկումներից հետո որոշվեց՝ հաստատել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի նոր հաստիքացուցակը և համապատասխան դրույքաչափերը, վերանայել վարորդի հաստիքի համար նախատեսված դրույքաչափը՝ այն համապատասխանեցնելով ծրագրի իրականացման գրասենյակներում այդ հաստիքի համար նախատեսված դրույքաչափին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ (ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ)



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ